Այս առթիւ հետաքրքրական են Թիֆլիսի այն օրերի հայ թերթերի հաղորդած տեղեկութիւնները: Այսպէս, «Հորիզոն»-ի մէջ կարդում ենք. «Երկրի մէջ այս տարի կրթական-կուլտուրական կեանքը աւելի փայլուն շրջան ունեցաւ, քան անցեալ տարիներուն: Վանի մէջ գոյութիւն ունեն մօտ 16 դպրոցներ: Դպրոցներ կան նաև երկրի ամէն մէկ անկիւնը: Կան նաև որբանոցներ: Դպրոցական-որբանոցային հսկողութիւնը կը գտնի Արևմտահայ Խորհուրդին ձեռքը, բայց տեղական երիտասարդ ուժերն են գլխաւորաբար, որ կը վարեն գործը: Երկրի որոշ վայրերու մէջ բացուած են նոյնպէս գրադարան-ընթերցարաններ: Մէկ-մէկ կը պատահեն նոյնպէս երեկոյթներ, ներկայացումներ և այլն»:

1917 թւի վերջերին, Թիֆլիսի «Ազատամարտ»-ում գրաւուած վայրերից վերադարձած մի ճանապարհորդ գրում էր. «Տասնեակ վերստերով ճամբայ կտրեցինք, Թիմարի ամբողջ երկարութեամբ և չգտանք ո՛չ մէկ թիզ հող առանց վարելու. միայն մէկ տեղ հանդիպեցանք անվար հողի, երբ, սակայն, քիչ ետք նկատեցինք, որ հեռուէն հայ ծեր գիւղացին խոիք ձգած էր հողին մէջ և սկսած էր վարել միակ անհերկ հողը»:

Նոյնն էր պատկերը, ընդհանրապէս, և միւս շրջանների համար: Հ. Գիւղասնտ. Ընկերութիւնը և Հայաստանի Կոմիսարիատը գերմարդկային ճիգ դրին ժողովրդին սերմացու ու լծկան հասցնելու համար, և երկիրը ծածկուեց կանաչ արտերով:

Ռուսական իշխանութիւններն ու զօրահրամանատարներն էլ օժանդակում էին հայերին: Առաջւայ թշնամական վերաբերումը հետզհետէ չքանում էր: Դեռ պատահում էին անհատ պաշտօնեաներ կամ հրամանատարներ, որոնք խէթ աչքով էին նայում այս «Հայաստանի կառուցման» վրա, բայց ընդհանուր քաղաքականութիւնը հայանպաստ էր: Հրամանատարութեան համար հայերի ներկայութիւնը ռուս բանակի թիկունքում օգտակար էր թէ ռազմագիտական տեսակէտով և թէ, մանաւանդ, այն պատճառով, որ հայերի մշակած արտերից զօրքը կը ստանար պարէն և անասունների կեր: Հաղորդակցութեան միջոցների խանգարումով՝ Ռուսաստանից հացահատիկ ու խոտ հասցնելը դառնում էր աւելի և աւելի դժուար: Հայերի մշակած հողերը, մասամբ, կը լրացնէին այդ պակասը:

Առհասարակ, զարմանալի կենսունակութեան և ձեռներէջութեան ոգի յայտնաբերեց արևմտահայ ժողովուրդը: Ամենատաժանելի պայմաններում, Նիկոլայ Նիկոլայևիչի ռեժիմի տակ, նա պահեց իր հոգեկան արիութիւնը և կազմակերպեց իր հաւաքական կեանքը: Յեղափոխութիւնից յետոյ, նա փութաց ամբողջապէս իր ձեռքն առնել սեփական ճակատագրի տնօրինումը: Այդ տեսակէտից ահագին դեր կատարեց Արևմտահայ Առաջին Համագումարը, մայիս 2—11-ին, Երևանում:

Համագումարը հրաւիրուեց միջկուսակցական կազմակերպիչ մարմնի կողմից և բաղկացած էր 80 պատգամաւորներից և խորհրդակցական ձայնի իրաւունք ունեցողներից, որոնցից 15 հոգին Թիւրքահայաստանից, 27 Կովկաս ապաստանած դաղթականներից, 14 ընկերութիւններից ու միութիւն-

---

Սասունի «Տաճկահայաստանը Ռուսական Տիրապետութեան Տակ (1914—1918), Բոստոն, 1927». գրքից: